ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՊԻՏՈՒՅՔՆԵՐ, ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Կազմող՝ Մերի Խանջյան

2013

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր

Կազմող՝ Արհեստների ավագ դպրոց, քոլեջի կարի տեխնոլոգիայի դասավանդող՝ Մերի Խանջյան
Լուսանկարները՝ Արհեստների ավագ դպրոց, քոլեջի կարի տեխնոլոգիայի դասավանդող՝ Մերի Խանջյանի և համացանցից
Ձևավորող՝ Արհեստների ավագ դպրոցի, քոլեջի դիզայներ՝ Կարինե Մացակյան
Համակարգող՝ Արհեստների ավագ դպրոցի, քոլեջի ընթերցավար՝ Լիլիթ Հարությունյան

Կարի գործիքներ, պիտույքներ, և նյութեր. դասագիրք- Ե.: Քոլեջ, Արհեստների ավագ դպրոց, 2013թ.-15 էջ

ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՊԻՏՈՒՅՔՆԵՐ, ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Հագուստի պատրաստման գործողությունը կազմված է ձեռքի և մեքենայի կարերի, արդուկի, հարդարանքի աշխատանքներից, որոնց կատարման համար պահնջվում են հատուկ աշխատանքային գործիքներ, պիտույքներ և նյութեր, որոնցից են հետևյալները՝

Սանտիմետրաժապավենը տարբեր լայնությամբ, 150 սմ երկարությամբ մոմլաթից կամ հատուկ գործվածքից պատրաստված, սանտիմետրերի և միլիմետրերի բաժանված ժապավեն է: Սանտիմետրաժապավենը օգտագործում են չափսեր վերցնելու, գործվածքը չափելու համար:

Դերձակի մկրատը անհրաժեշտ է ձևվածքը կտրելու, գործվածքը ձևելու համար: Մկրատները լինում են մեծ, միջին և փոքր:
Մեծ մկրատովձևում են հաստ գործվածքները (կոստյումացու. վերարկուի), միջին մկրատով՝ բամբակյա, մետաքսյա և թեթև բրդյա գործվածքները,
իսկ փոքր մկրատովանում են փոքր կտրվածքներ (կոճկանք, թել կտրել)

Ձեռքի կարի ասեղը ձեռով կարելու հիմնական գործիքն է: Ամենաբարակ ասեղը √1 է, իսկ ամենահաստը՝ √12: Յուրաքանչյուր ասեղ պետք է համապատասխանի թելի և գործվածքի համարին: Որքան բարակ է գործվածքը այնքան բարակ ասեղ թել են վերցնում և ընդհակառակը:

Գնդասեղները անհրաժեշտ են ձևելիս ձևվածքը գործվածքին ամրացնելու, նախքան շուլալակարելը մասերն իրար միացնելու, հագուստը չափափորձելու համար: Գնդասեղների ծայրերը պետք է լինեն սուր, առանց ծռվածքի, որպեսզի գործվածքը ծակելիս թել չքաշվի:

Մատնոցը անհրաժեշտ է ասեղը գործվածքի մեջ մտցնելու և մատը ծակելուց պաշտպանելու համար: Հագնում են աջ ձեռքի միջնամատի վրա: Մատնոցը պետք է համապատասխանի մատին: Ձեռքի աշխատանքներ կատարելիս օգտագործում են երեք տեսակի մատնոցներ՝ հատակով կոնաձև, առանց հատակի կոնաձև և օղակաձև:

Բարձիկը անհրաժեշտ է կարելիս նրա վրա ասեղներ և գնդասեղներ ամրացնելու համար:



Բրիկը օգտագործում են շուլալակարի թելերը դուրս քաշելու, գոտու անկյունները հավասարեցնելու, օղակները ուղղելու համար: Բրիկները լինում են ոսկրյա, մետաղյա, փայտյա և պլաստմասսայից:

Դերձակի կավիճը լինում է տարբեր գույների տափակ սալիկների ձևով: Դրանք անհրաժեշտ են ձևվածքիմասերը գործվածքի վրա գծելու համար: Կավիճի եզրը պետք է լավ սրված լինի, որպեսզի ձևելիս և չափափորձման ժամանակ արված գծերը ստացվեն ճիշտ ու պարզ: Որոշ մետաքսյա գործվածքների վրա կավիճը հետք է թողնում, որը դժվարությամբ է մաքրվում: Այդպիսի գործվածքների վրա գծում են չոր , բարակ ձեռքի օճառով, հետագայում այդ գծերը հեշտությամբ մաքրվում են չոր լաթով:

Մանեկենը օգտագործում են շուլալակարած և պատրաստի հագուստը չափափորձելու համար: Դրանք լինում են տարբեր չափերի: Մանեկենը փոխարինում է մարդու կազմվածքին: Մանեկենի չափը որոշում են այնպես, ինչպես մարդունը (այսինքն կրծքի շրջագծի չափով):

Նյութեր: Կարելու և ձեռագործելու համար օգտագործում են կոճի (կարի) ձեռագործի թելեր, լցաթելեր:

Կարի թելերը լինում են կոճերի և գլանակների վրա, դրանք, ինչպես և ասեղները, պետք է համապատասխանեն գործվածքի հաստությանը: Թելերն ընտրում են գործվածքի գույնին համապատասխան կամ մի քիչ մուգ: Ամենաբարակ կոճի թելը 100 համարն է, ամենահաստը՝ 10:
Հաստ թելերով կարում են կոճակները, կեռիկները, օղակները:

Լցաթելերը օգտագործում են լցակարերի և պատճենահանման կարերի համար: Դրանք հարմար են նրանով, որ հագուստի մասերը կարելիս համարյա գործվածքից չեն թափվում, քանի որ մոմով պատված չեն և չեն սահում:

Ձեռագործի թելերը լինում են կարժերով և ստվարաթղթե գլանակների վրա: Դրանք օգտագործում են հագուստների գեղազարդման համար: Այդ թելերից են մուլինեն, իրիսը, բրդյա թելերը և բնական ու արհեստական մետաքսաթելերը»

ՄԱՐՄՆԱԿԱԶՄԻՑ ՉԱՓՍԵՐ ՎԵՐՑՆԵԼԸ

Չափսեր վերցնելը հագուստի պատրաստման կարևոր փուլերից մեկն է: Հագուստի պատրաստման ճշտությունը կախված է ձևվածքի գծագրի ճիշտ կառուցումից:
Չափսեր վերցնելիս անհրաժեշտ է լավ իմանալ կազմվածքի վրա տեղադրված հիմնական գծերը(պարանոցի, կրծքի, գոտկատեղի, կոնքի, ծնկի գիծ) և դրանց հեռավորությունը միմյանցից: Նախքան չափսեր վերրցնելը կազմվածքի վրա մտովի տանում են հորիզոնական և ուղղահայաց (կենտրոնական) գծեր:
Չափսեր վերցնելիս պետք է ունենալ սանտիմետրաժապավեն, որի օգնությամբ չափում են կազմվածքը, երիզ՝ գոտկատեղը և նրա հետ կապված այլ չափսերը ավելի ճիշտ որոշելու համար, մատիտ և թուղթ՝ չափսերը գրանցելու համար: Չափսերը վերցնում են հերթականությամբ՝ վերևից ներքև և գրում են միշտ նույն կարգով, ընդ որում վերցնում են միայնայն չափսերը որոնց անհրաժեշտ են տվյալ հագուստը կարելու համար: Բոլոր տեսակի հագուստների համար չափսերը վերցնում են թեթև շրջազգեստ կամ լողազգեստ հագած հագուստի վրայից:
Չափսերը վերցնելուց առաջ անհրաժեշտ է գոտկատեղը կապել երիզով, կանգնել հանգիստ, ձեռքերը իջեցրած ներքև: Չափսեր վերցնելիս հաշվի է առնվում կազմվածքի բոլոր առանձնահատկությունները:
Կազմվածքը չափում են լայնությամբ և երկարությամբ: Լայնության չափսերը (պարանոց, կրծքի, գոտկատեղի, կոնքի, թիկունքի և առաջամասի լայնություն) կազմվածքից վերցնում են լրիվ, իսկ գրառում են չափսի կեսը, որովհետև գծագիրը կառուցում են կազմվածքի կեսի չափսով, նկատի ունենալով, որ աջ և ձախ կողմերը մարմնի համաչափ են:

1. Կրծքի տրամագիծ—չափում են թիակների վրայով, թևատակով կրծքի ամենաբարձր մասով, այդ չափով որոշում են մարմնի չափսը:
2. Գոտկատեղի շրջագիծ- չափում են գոտկատեղի ամենանեղ մասով
3. Կոնքի շրջագիծ – չափում են հորիզոնական, հետևամասի զարգացած մկաններով, հաշվի առնելով փորի ուռուցիկությունը
4. Ծնկի շրջագիծ- ծնկի ամենանեղ մասով
5. Ուսի լայնություն - չափվում է ուսի ամենաբարձր կետից մինչև ամենացածր կետը (ուսագլուխ)
6. Թիկունքի լայնություն – չափվում է թիակների վրայով մինչև ծալման գիծ
7. Կրծքի լայնություն – չափվում է կրծքի հիմքով թևի ծալման գծերի միջև եղած տարածությունը
8. Թևի երկարություն – չափում են թևի գագաթից, արմունկի վրայով մինչև դաստակ
9. Թիկունքի երկարություն- չափում են 7-րդ ողից մինչև գոտկատեղ

1.

2.

3.

4.

5.

6.

7.

8.

9.